ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հոկտեմբերի 2023թ. թիվ 584-Ա

ՀԵՂԻՆԵ ԱՎԱԳՅԱՆԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ
ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ի կատարումն ՀՀ վարչական դատարանի 01.09.2021թ. թիվ ՎԴ6/0052/05/20 վճռի և ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 08.09.2023թ. թիվ ՎԴ6/0052/05/20 որոշման պահանջների, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ մասը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Սարամեջ բնակավայրի 11-րդ փողոցի 2-րդ նրբանցքի բնակիչ Հեղինե Սուրենի Ավագյանին հատկացնել 3000000 /երեք միլիոն/ ՀՀ դրամ՝ որպես ոչ իրավաչափ անգործության արդյունքում պատճառված վնասի հատուցում:

2. Սահմանել, որ.

1) 1000000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամը ենթակա է փոխանցման Հեղինե Ավագյանի կողմից ներկայացված հաշվեհամարին մինչև 2023 թվականի նոյեմբերի 30-ը:

2) մնացած 2000000 /երկու միլիոն/ ՀՀ դրամը ենթակա է փոխանցման մինչև 2024 թվականի մարտի 1-ը:

3. Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետին և իրավաբանական բաժնի պետին՝

3000000 /երեք միլիոն/ ՀՀ դրամը ամբողջությամբ Հ.Ավագյանի հաշվեհամարին փոխանցելուց հետո կազմակերպել քաղաքացի Հեղինե Ավագյանի կողմից հետագայում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ բնակարանային պահանջ չներկայացնելու մասին նոտարական կարգով վավերացված հայտարարությունը մարզպետի աշխատակազմ ներկայացնելու գործընթացը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

24/10/23

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 24
ք.Վանաձոր